

ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՀԱՅԵՐԻ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՌԻԹՈՎ

Երկու տարի առաջ նոյն այս էջերում քննելով Ռուսաստանի հայերի թւի հարցը՝ *) մենք ստիպուած էինք աւելի ընդհանուր վիճակագրական խորհրդածութիւնների, քան ճիշդ տեղեկութիւնների հիման վրայ որոշ եզրակացութիւններ անել: Բանը այն է որ մինչև 1903 թւականը «Кавказский Календарь»-ը անփոփոխ առաջ էր բերում դեռևս 1886 թւականին պոլիցիայի կազմած վիճակագրութիւնը, որով հայերի թիւը Կովկասում հաւասար էր 963,982 հոգու: 1897 թւականի յոշնուարի 28-ին կայացած ընդհանուր ժողովրդագրութեան մեզ հետաքրքրող մասը դեռ մշակուած ու հրատարակուած չէր: Ռուսաստանի ազգաբնակչութեան բաժանումը ըստ գլխաւոր դասնութիւնների յայտնի եղաւ միայն անցեալ տարի: 1903 թւականի «Кавк. Календарь»-ի մէջ, համաձայն 1897 թւականի ժողովրդագրութեան, հայ-լուսաւորչականների թիւը Կովկասում արդէն նշանակուած էր 1,128,973 հոգի: Սակայն այս 1904 թւականի հրատարակութեան մէջ յիշեալ պաշտօնական օրացոյցը **) ինկատի է առել նաև ազգաբնակչութեան բնական աճումը ու մի քանի այլ տեղեկութիւններ և հայերի թիւը Կովկասում հաշուել է յանկարծ աւելի քան 1,243,000. «Общее число армянскаго населения на Кавказѣ простирается свыше 1,243,000 человекъ».

*) «Մուրճ», 1902 թ., № 4.

**) Հրատարակում է Կովկասի կառավարչապետի կարգադրութեամբ և Ազգրիովկասեան Ստատիստիկական կոմիտեի գլխաւոր խմբագիր Ե. Կոնդրատինկոյի խմբագրութեամբ:

***) Ibid, III отд., երես 54:

Նոյն օրացոյցը հայ-կաթոլիկներէ թիւը կովկասում հաշւում է 22,136, իսկ հայ-բողոքականներէ մասին տեղեկութիւններ չկան: Բնականաբար՝ տեղեկութիւններ չկան նաև կովկասից դուրս գտնուող Ռուսաստանի հայերի մասին, որ մենք հաշւել էինք մօտ 50 հազար: Արդ, եթէ ինկատի ունենանք այդ բոլոր հանգամանքները, մենք պէտք է ընդունենք որ երկու տարի առաջ արած մեր եզրակացութիւնները բաւական մօտ էին ճշմարտութեան, և թէ իսկապէս ոչ միայն չափազանցութիւն չէր մեր ենթադրութիւնը, որ Ռուսաստանի հայերի թիւը հաւասար է մօտ 1,300,000 *), այլ և պէտք է այժմ դրանից աւելի համարել:

Կովկասում հայերը (լուսաւորչ.), համաձայն 1897 թ. ժողովրդագրութեան, զանազան նահանգներում և շրջաններում հետեալ կերպով են հաշւած.

Երևանի նահանգում	498,110	հոգի
Գանձակի	»	293,632 »
Թիֆլիսի	»	218,841 »
Բազուի	»	81,615 »
Ղարսի շրջանում	81,021	»
Կուբանի	»	14,173 »
Բաթումի	»	14,085 »
Թերեքի	»	10,632 »
Չերնոմորեան նահ.	6,582	»
Սուխումի շրջ.	4,040	»
Ստաւրօպոլեան նահ.	4,025	»
Դաղստանի շրջ.	3,068	»
Քութայիսի նահ.	2,982	»
Ջաբաթալայի շրջ.	2,195	»

Անշուշտ այդ թւերը այժմ իսկականից պակաս են, որովհետև ինկատի չի առնուած բնական աճումը սկսած 1897 թըւականից: Նոյն «Вавк. Кад.» (III отд. երես 51) այժմ Երևանի նահանգում հայերի թիւը հաշւում է 506 հազար, Գանձակի նահանգում 294 հազար, Թիֆլիսի նահանգում 221 հազ., Բազուի նահանգում 89 հազ., Ղարսի շրջանում 83 հազ. և այլն, և ընդհանրապէս ամբողջ Կովկասում, ինչպէս յիշեցինք, աւելի քան 1,243,000 և ոչ 1,128,973, ինչպէս թւած է 1897-ի ժողովրդագրութիւնը:

ԼԵՆԻՆ ՍԱՐԳՍԵԱՆ

*) Ցես յիշած մեր յօդուածի վերջը: